

Թիւ 25628  
Փետրուար 22, 1978

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Ժ. Վրդ. Արզումանեան  
Հովիւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժխական Խորհուրդի  
Ունիւմա.

Սիրելի Հայր Զաւէն,

Ստացած ենք Փետրուար 17, 1978 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդուէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 12ին գումարուած համայնքիդ ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի ԵԻՅՁ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր ժխական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ժխական Խորհուրդի նորընտիր Քիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ռիչըրտ Պոյանեան  
Վահէ Սողոմոնեան  
Էտուըրտ Ունժեան  
Արաքսի Ռիչըրտ  
ժան Բարսեղեան  
Ռուբէն Պէրպէրեան  
Զարլզ Կարապետեան